Առաջարկում ենք երկու տիպի տեքստ. I տեքստն անձնական բնույթի է, իսկ II -ը՝ կրթական:

<u>Ծանոթացե՛ք ստորև տրված տեքստերին և պատասխանե՛ք հարցերին:</u>

Տեքստ I

Զբոսաշրջային կազմակերպություններից մեկի կայք-էջի վրա մատնացույց է արված հետևյալ տեղեկատվությունը. «Առաջարկում ենք 1-օրյա շրջայց (տուր) Քվեմո Քարթլի, Բիրթվիսի բերդ-ամրոց և կիրճ (կանյոն):

Պատմական տեղեկանք Բիրթվիսի մասին.

Բիրթվիսի բերդ-ամրոցը Վրաստանի հարուստ պատմության վկան է: Բիրթվիսի բերդը պատմական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվել է XI դարում, թեև այն անհամեմատ ավելի վաղ պետք է կառուցված լինի: Իր ժամանակին Բիրթվիսի բերդը համարվում էր նաև անառիկ: Այն բնականորեն անհասանելի տեղանքում է գտվում: Բիրթվիսին սովորական բերդ չէ, որին շրջապատում են պարիսպ և աշտարակներ: Այստեղ վեր խոյացած բարձր լեռներով սահմանագծված մեծ տարածության վրա ցրված են քարաժայռ և սրածայր լեռներ: Բոլոր անցքերը արհեստականորեն ամրացված են և պատերով փակված:

Գրառում արշավի մասնակցի պատմածից.

«Աշնան մոտենալու հետ միասին ընկերներով մեր ճանապարհորդությունը սկսեցինք Բիրթվիսիով: Թբիլիսիից ժամը 8-ին դուրս եկանք և նշանակված տեղ հասանք մոտավորապես ժամը 9-ին: Լանդշաֆտը ժայռոտ և ծուռ ու մուռ է, այդ պատճառով մենքենան լեռան ստորոտին թողեցինք և երթը ոտքով շարունակեցինք: Որքան ավելի մոտենում էինք նշանակված գլխավոր կետին, ավելի ու ավելի էինք դժվարանում թաքցնել զարմանալի տեսարաններով առաջացած մեր հիացմունքը: Կարճ ժամանակ քայլեցինք երկու կողմերից հսկայական քարաբեկորներով սահմանագծված նեղ ճանապարհով և իջանք բազմաթիվ մագլցող ժայռերով լեցուն գեղեցկագույն կիրճը: Մոտեցանք փոքր քարայրի, ավելորդ բեռը այնտեղ ևեթ թողեցինք և ճանապարհը շարունակեցինք դեպի կիրճի ամենաբարձր ժայռը, Բիրթվիսի բերդ-աշտարակը՝ «Շեուպովարին» տեսնելու համար: Միակ հիմնախնդիրն այն էր, որ անձրևից հետո թաց տեղերում ոտքը սահում էր և դժվարացնում էր ժայռերի վրա բարձրանալը:

Ինչ վերաբերում է ճանապարհին, արշավը Բիրթվիսի բերդ բարդ ճանապարհորդությունների ցուցակում չի մտնում, թեև մեզ համար այնուամենայնիվ հեշտ չէր բավականին թեք ժայռերի վրա մագլցելը, ինչին օգնեց ալպինիստական պարանը: Այդ պարանով բարձրանալ-իջնելը մեզ համար նոր պտուղ (հաճույք) էր: Ադրենալինը, ինչ խոսք, իրենն արեց և հաղթահարեց բարձրության նկատմամբ վախը: Որքան ավելի բարձրին էինք հասնում, այնքան ավելի ու ավելի էր ավելանում ցանկությունը և հետաքրքրությունը, թե ինչ կհանդիպի մեզ վերևում: Նման ճանապարհների վրա քայլելուց անփորձ լինելու փաստի պատճառով, շատ էլ չենք վախեցել և մոտավորապես մեկուկես ժամում հայտնվեցինք լեռան գագաթին: Այդ անծայրածիր տարածությունը և գեղեցկությունը նույնիսկ լուսանկարի վրա չէր կարող տպավորվել, այդ պատճառով մեզ մնում էր միայն ամպերի մոտիկության հետ անցկացված վայրկյաններով բավականությունը:

Նյութը պատրաստվել է https://georgiantravelguide.com կայք-էջի վրա հրապարակված տեղեկատվության համաձայն:

1. Ստորև տրված են խորհուրդներ արշավի մասնակիցներին: Դրանցից ո՞րը **<u>հարկավոր չէ</u>** Բիրթվիսի արշավողի համար:

ա) Հագե՛ք անպայման փակ կոշիկներ, որոնք հարմարավետ են և ունեն պինդ բռնած հաստ, առաձգական, ռելիեֆային կոշկատակ:
բ) Մոտներդ ունեցեք փոխելու կոշիկ և հագուստ՝ կիրճերում քայլելիս հնարավոր է թրջվեք:
գ) Առանց փորձված էքսկուրսավարի մի' փորձեք բարձրանալ բավականին թեք ժայռերին, որոնք մեկ հայացքով թվում են հեշտությամբ նվաճելի:
*դ) Մինչև Բիրթվիսի կիրճ հասնելու համար անպայման անհրաժեշտ է բարձր անցողունակության ավտոմեքենա:

2. Բիրթվիսի բերդը **«Շեուպովարի»** (Անառիկ) են անվանում, որովհետև.

ա) այն ժայռերով և սրածայր լեռներով է շրջապատված,
բ) այն ամրակուռ քարով է կառուցված,
*գ) բազում տարիների ընթացքում թշնամին չի կարողացել այն գրավել,
դ) ուղևորների փոխանցմամբ, նրա վրա բարձրանալը շատ դժվար է:

3. Ու՞մ խորհուրդ կտայիք արշավի գնալ Բիրթվիսի:

*ա) Նրանց, ում հետաքրքրում է վայրի բնությունը, արկածներ և հնություններին ծանոթություն,
բ) միայն լավ ֆիզիկական պատրաստություն ունեցող փորձված լեռնագնացներին,
գ) նրանց, ում հետաքրքրում են պատմական հուշարձանները, թեև ծայրահեղությունը (էքստրեմ) չի գրավում,
դ) լուսանկարչությամբ տարված ճանապարհորդներին, ովքեր ոտքով երկար տարածություն անցնել չեն կարող:

4. Ստորև թվարկածներից ի՞նչը **<u>չի ենթադրում</u>** հետևյալ նախադասությունը. «Բիրթվիսի բերդ-ամրոցը Վրաստանի հարուստ պատմության վկան է»:

ա) Բիրթվիսի բերդ-ամրոցը շատ թշնամու է հաղթել,
բ) Բիրթվիսի բերդ-ամրոցի գլխով շատ բան է անցել,
*գ) Բիրթվիսի բերդ-ամրոցը շատ պատմական աղբյուրներում է հիշատակվում,
դ) Բիրթվիսի բերդ-ամրոցը շատ անգամ է եղել օտար ցեղերի հարձակումների օբյեկտ:

5. **Կիրճ (կանյոն)** բառը նշանակում է.

ա) թեք ժայռ
*բ) խոր և նեղ կիրճ
գ) քարանձավ ժայռում
դ) անընդգրկելի անդունդ

6. Տեքստում տրված է նախադասություն. «Ալպինիստական պարանով բարձրանալ-իջնելը նույնպես մեզ համար նոր պտուղ (հաճույք) էր»: Ստորև թվարկածներից ո՞րն է պատկերում այս նախադասության բովանդակությունը:

ա) Ալպինիստական պարանով ժայռի վրա բարձրանալ-իջնելը տհաճ նորություն էր մեզ համար,
բ) ժայռի վրա բարձրանալ-իջնելու ժամանակ մինչ այդ էլ հաճախ էինք կիրառել ալպինիստական պարան,
գ) ալպինիստական պարանը ժայռի վրա բարձրանալ-իջնելը նշանակալիորեն հեշտացրեց,

*զ) ժայռի վրա բարձրանալ-իջնելու ժամանակ մինչ այդ ալպինիստական պարան երբեք չէինք կիրառել:

7. Ստորև տրված դատողություններից ո՞րը **չի քիչում** տեքստից:

*ա) Բիրթվիսի բերդի հազվագյուտ լինելը ամուր կառուցված պատերով է պայմանավորված, ինչը վաղ ժամանակաշրջանի ռազմական ճարտարապետության որակյալ լինելու մասին է խոսում,
բ) Բիրթվիսի բերդի շրջակայքի շլացուցիչ գեղեցկությունը ճանապարհի դժվարությունը մոռացնում և էներգիայով է հագեցնում,
գ) Բիրթվիսի բերդի բնական լանդշաֆտային ճարտարապետությունը այն վերածում էր կարևոր ռազմական հաջողությունների խորհրդանշանի,
զ) այն արշավողների համար, որոնց սպորտային հափշտակությունը ներկայացնում է ժայռամագլցումը, Բիրթվիսի բերդի երթուղին դժվարություն չպետք է ներկայացնի:

Տեքստ II

Ֆրանսիացի գիտնականներ Սապեն-Ժալյուստրը և Պրեվոն, հաղորդում են նորագույն տվյալներ Անտարկտիդայի ամենատարօրինակ բնակիչների՝ կայսերական պինգվինների մասին: Այս թռչուններին կայսերական պինգվիններ են անվանում հսկայական մարմնի և ծանր քաշի (կշռի) պատճառով: Չնայած պաշտպանող ճարպային շերտին, կայսերական պինգվինները առանձին-առանձին չեն կարող գոյություն ունենալ: Ճիշտ այդ է պատճառը, որ դրանց շրջանում այդպես զարգացած է «հասարակական» ջերմակարգավորումը: Երբ ջերմաստիճանը չափից ավելի ընկնում է, 200-300 պինգվին խիտ հպվում են միմյանց և ստեղծում են իսկական շրջան, այսպես կոչված կրիա: Այս շրջանը դանդաղ, բայց անդադար պտտվում է կենտրոնի շուրջը: Ձագերի դուրս գալու ժամանակ «կրիան» կարող է ունենալ 500-ից մինչև 600 առանձնյակ: Կենտրոնի շուրջը պտտվելիս նրանք հուշիկ կերպով շարժվում են քամու ուղղությամբ: Ձնախառն փոթորիկն այստեղ շարունակվում է 36-48 ժամ: Ինչպես Պրեվոն սահմանեց, այստեղ ձյունախառն քամու մեջ «կրիան» 100-200 մետրով փոխում է տեղը: Փոթորկից հետո պինգվինները ցրվում են: Արդյունավե՞տ է, թե՞ ոչ այսպիսի «հասարակական» ջերմակարգավորումը: Ֆրանսիացի գիտնականները համոզվեցին դրա արդյունավետության մեջ, երբ ջերմաստիճանը չափեցին: -19°սառնամանիքի պայմաններում ջերմաստիճանը «կրիայի» կենտրոնում հայտնվեց մոտավորապես +35°:

Լռությունը և գիշերային անդորրը պինգվինների գաղութի համար օտար է: Նրանք տարբեր տեսակի ձայներ են արձակում: Երբեմն նրանց ձայնը շեփորի ձայնի նման է հնչում և այնքան ուժեղ է, որ մի քանի կիլոմետրի վրա լսվում է: Պինգվինների աղմուկի մեջ կարելի է ջոկել սարսափ, զայրույթ կամ բավականություն արտահայտող բացականչություններ: Պրեվոն գաղութից մի քանի կիլոմետրով հեռացած պինգվինի աչքերը ծածկեց կապյուշոնով և միայն լսողական օրգանները ազատ թողեց: Պինգվինին բաց թողնելուն պես թռչունը ուղղվեց ուղիղ ցեղակիցների կողմը: Երբ հակառակ ձևով վարվեց. լսողական օրգանները փակեց և աչքերը բաց թողեց՝ մոլորված թռչունը մի տեղում սկսեց պտտվել և իր գաղութը չկարողացավ գտնել:

Ամռան վերջին (Անտարկտիդայում դա մոտավորապես մարտ ամսվա կեսերին է) լողացող սառույցները առանձին կտորների են բաժանվում և պինգվինները, որոնք սառույցի կտորների վրա են հայտվում, մեծ տարածությամբ հեռանում են իրենց գաղութից: Բայց երբ ծովը սառույցով է պատվում, նրանք, ինչ-որ գաղտնի հմտության շնորհիվ, ետ են

վերադառնում: Երբ նոր եկած պինգվինը մի քանի մետրով մոտենում է գաղութին, նա գլուխը իջեցնում է մինչև գետին, սկսում է երգել, կամաց-կամաց գլուխը բարձրացնում է, ականջ է դնում և կարճատև դադարից հետո խառնվում է պինգվինների կույտին: Այս ճանապարհով պինգվինները նաև իրենց «ամուսիններին» են գտնում: Պրեվոն օղակներով նշեց թռչուններին և համոզվեց, որ ձայնային ազդանշանները օգնում են «ամուսիններին» միմյանց որոնման մեջ, իսկ նրանց «ամուսնալուծությունը» հազվագյուտ բան է ներկայացնում: Ինչպես օրենք, էգ պինգվինը վերադառնում է ձվի վրա թուխս նստած արուին՝ նա ամբողջ գաղութում փնտրում է նրան, գտնում է և ձվի վրա զբաղեցնում է նրա տեղը: Անգամ այն ժամանակ, երբ ամբողջ գաղութը որպես «կրիա» է հավաքվում, ամուսինները ձգտում են որքան հնարավոր է միմյանց մոտ լինել, նրանք հաճախ գլուխը հենում են միմյանց վրա:

1. Ի՞նչումն է, այսպես կոչված, կրիայի նշանակությունը:

ա) Պինգվինների բազմաքանակ գաղութը ստեղծում է իսկական շրջան, որպեսզի պինգվինները կարողանան տեղաշարժվել ձյունախառն փոթորկի ժամանակ,

բ) պինգվինները կենտրոնի շուրջը պտտվելիս քամու ուղղությամբ են շարժվում, որպեսզի փոթորկի ժամանակ միմյանցից չհեռանան,
*գ) պինգվինները խիտ հպվում են միմյանց և ստեղծում են անդադար շարժվող շրջան, որպեսզի պահպանեն ջերմաստիճանը որոշակի մակարդակի վրա,
դ) 500-ից մինչև 600 պինգվինից բաղկացած շրջանը հուշիկ կերպով է պտտվում, որպեսզի չխանգարի ձագերի դուրս գալու գործընթացին:

2. «Ջերմակարգավորում» բառը կցված է «հասարակական» որոշիչ բառին, որովհետև.
*ա) պինգվինների գաղութը, որպես հասարակություն, որոշակի կանոնի պահպանությամբ, ընդհանուր նպատակին հասնելու համար գործում է փոխհամաձայնեցված,
բ) պինգվինները առանձին-առանձին չեն կարող գոյություն ունենալ և գաղութում ջերմակարգավորման ժամանակ նրանց խումբը պետք է նմանվի իսկական հասարակության,
գ) ջերմակարգավորման գործընթացը դիտարկելու արդյունքում պարզորեն բացահայտվեց, որ պինգվինների խումբը հարմարված է Անտարկտիդայի կլիմային,
դ) պինգվինների խմբի սոցիալական կառուցվածքը հասարակական կառուցվածքին նույնական է:

3. Պրեվոյի փորձաքննության արդյունքում **անհնար է** հանգել եզրակացության.

ա) պինգվինների կողմից արձակված տարբեր ձայնային ազդանշանները օգնում են նրանց միմյանց գտնելու գործում,
*բ) հաղորդակցության գործընթացում ինչպես տեսողական, այնպես էլ լսողական խթանները պինգվինների համար որոշիչ դեր են կատարում,
գ) տարածությունում կողմնորոշվելու պինգվինների ունակությունը, էականորեն հենվում է ձայնական (ակուստիկ) զգացողության վրա,
դ) պինգվինների կողմից սեփական գաղութը որոնելու գործընթացում ձայնային ազդանշանների նշանակությունը գերազանցում է տեսողականին:

4. Ինչո՞ւ Պրեվոն օղակներով նշեց պինգվիններին:

ա) Որպեսզի պարզեր, ինչու միմյանցից երբեք չեն հեռանում «ամուսինները»,
բ) որպեսզի պարզեր, ինչն էր այն գաղտնի հմտությունը, որի օգնությամբ էլ սառույցից պոկված պինգվինները ետ են վերադառնում,
*գ) որպեսզի համոզված լիներ, որ «ամուսինները» ձայնային ազդանշանների օգնությամբ գտնում են միմյանց,
դ) որպեսզի համոզված լիներ, որ պինգվինների զույգերի «ամուսնալուծությունը» հազվագյուտ դեպք է:

5. Ի՞նչ առնչություն է II և III պարբերություններում նկարագրված հետազոտությունների միջև:

*ա) Այս հետազոտությունների ընթացակարգերը տարբերվում են միմյանցից, չնայած այն բանին, որ դրանց արդյունքները նման են:
բ) Այս հետազոտությունների ընթացակարգերը նման են, չնայած այն բանին, որ դրանց արդյունքները տարբերվում են միմյանցից:
գ) Այս հետազոտությունների և՛ նպատակները և՛ ընթացակարգերը նման են, թեև դրանց արդյունքները տարբերվում են միմյանցից:
դ) Այս հետազոտությունների և՛ նպատակները, և՛ արդյունքները տարբերվում են միմյանցից, թեև դրանց ընթացակարգերը նման են:

6. Ստորև անվանվում է երկու թեմա, որոնք տեսաբանված են տեքստում.
I – լսողության առանձնահատուկ նշանակությունը պինգվինների փոխհարաբերությունում
II – պինգինների բազմացումը և դրա հետ կապված որոշ տեսանկյուններ

Ո՞ր պարբերությունում է զարգանում յուրաքանչյուր թեման, այսինքն՝ պատասխանի տարբերակներից ո՞րն է արդարացի:

ա) I-ը տեսաբանված է առաջին պարբերությունում, իսկ II -ը՝ երրորդում,
բ) I-ը տեսաբանված է երրորդ պարբերությունում, իսկ II -ը՝ երկրորդում,
գ) I-ը տեսաբանված է առաջին պարբերությունում, իսկ II-ը՝ երկրորդում,
*դ) I-ը տեսաբանված է երկրորդ պարբերությունում, իսկ II -ը՝ երրորդում:

7. Ինչո՞ւ են չակերտների մեջ դրված «ամուսիններ» և «ամուսնալուծություն» բառերը:

ա) Այս բառերը հեգնանքով են ասված,
բ) այս բառերը հետազոտողների ասվածի կրկնություն է,
գ) այս բառերը կարևոր են տեքստը հասկանալու համար,
*դ) այս բառերը փոխաբերական իմաստով են ասված:

8. Ստորև թվարկածներից ո՞ր վերնագիրը կհամապատասխանի այս տեքստին:

ա) Հասարակական ջերմամեկուսացում և կայսերական պինգվիններ:
*բ) Կայսերական պինգվինների յուրահատուկ բնութագրիչներ,

գ) Լսողության և տեսողության խնդիրները կայսերական պինգվինների կյանքում,
դ) Սառնամանիքի պայմաններում ջերմաստիճանի կարգավորում պինգվինների «կրիայի» կենտրոնում:

Ճիշտ պատասխանները նշված են (*) նշանով: